ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2022

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 5

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1 **Օգտվելով քարտեզագրական հետազոտության մեթոդից՝ քարոլորտի սալերի տեղաշարժերի տեսությունը մշակեց.**

1) Ա. Հումբոլդտը
2) Ա. Վեգենները
3) Վ. Դոկուչաևը
4) Օ. Շմիդտը

2 **Լիալուսինը կեսգիշերին երևում է.**

1) արևելքում
2) հյուսիսում
3) հարավում
4) արևմուտքում

3 **Որքա՞ն է հարավարևմտյան կողմի ազիմուտը:**

1) 135˚
2) 225˚
3) 270˚
4) 315˚

4 **Նկարում 1-ում ի՞նչ պրոյեկցիա է պատկերված:**

1) հասարակածային
2) ազիմուտային
3) գլանային
4) կոնային

նկար 1

5 **Երկու կետերի իրական հեռավորությունը 48 կմ է: 1 : 800 000 մասշտաբի քարտեզում նրանց հեռավորությունը կլինի.**

1) 0,6 սմ
2) 6 սմ
3) 60 սմ
4) 600 սմ

6 **Ո՞ր պնդումն է ճիշտ:**

1) Հասարակածում ցերեկվա տևողությունը ամենաերկարը հունիսի 22-ին է:
2) Հասարակածում ցերեկվա տևողությունը ամենաերկարը դեկտեմբերի 22-ին է:
3) Հասարակածում ցերեկվա տևողությունը ամենաերկարը մարտի 21-ին և սեպտեմբերի 23-ին է:
4) Հասարակածում ամբողջ տարվա ընթացքում գիշերվա ու ցերեկվա տևողություններն իրար հավասար են:

7 **Նկար 2-ում ո՞ր տառով է նշված երկրագնդի ներքին միջուկը:**

1) Ա
2) Բ
3) Գ
4) Դ



նկար 2

8 **Նկար 3-ում ի՞նչ է պատկերված:**



նկար 3

1) հորստ
2) գրաբեն
3) պլատֆորմ
4) գեոսինկլինալ

9 **12 ամիսների օդի միջին ջերմաստիճանների գումարը բաժանելով տարվա ամիսների քանակի վրա՝ կարելի է որոշել օդի.**

1) առավելագույն ջերմաստիճանը
2) միջին տարեկան ջերմաստիճանը
3) ջերմաստիճանի լայնույթը
4) միջին ամսական ջերմաստիճանը

10 **Ընտրել կլիմայի բնորոշ գծերի և կլիմայի տիպերի համապատասխանությունների ճիշտ շարքը.**

1. ջերմաստիճանի մեծ տատանումներ և տարվա ընթացքում անհավասարաչափ բաշխված քիչ տեղումներ
2. ջերմաստիճանի փոքր տատանումներ և ամբողջ տարին թափվող առատ տեղումներ
3. մեղմ ու խոնավ ձմեռներ և տաք ու չոր ամառներ
4. ցուրտ ու չոր ձմեռներ և տաք ու խոնավ ամառներ

ա.ծովային կլիմա
բ.մուսսոնային կլիմա
գ. ցամաքային կլիմա
դ. միջերկրածովային

1) 1-բ, 2-գ, 3-դ, 4-ա
2) 1-գ, 2-ա, 3-բ, 4-դ
3) 1-գ, 2-ա, 3-դ, 4-բ
4) 1-բ, 2-գ, 3-ա, 4-դ

11 **Օվկիանոսի առափնյա գոտում մինչև 200մ խորությամբ տեղամասը կոչվում է.**

1) մայրցամաքային ծանծաղուտ
2) փողրակ
3) մայրցամաքային լանջ
4) ցածրավայր

12 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Ամեն տարի՝ նույն սեզոնին, գետի ջրի քանակի ավելացման երևույթը կոչվում է ծախս։
2) Գետի թեքությունը գետի անկման հարաբերությունն է նրա երկարությանը։
3) Լեռնային շրջաններում գետերի ջրբաժանն անցնում է լեռնաշղթաների ստորոտի ամենացածր մասով։
4) Տարվա ընթացքում գետի ջրի մակարդակի տատանումները կոչվում է գետի տարեկան հոսք։

13 **Տարվա ընթացքում ո՞ր լճերի մակերեսն է զգալիորեն փոխվում.**

1) Բայկալ և Բալխաշ
2) Վերին և Նյասա
3) Էրի և Օնեգա
4) Էյր և Չադ

14 **Բնական համալիրներից ո՞րն է աչքի ընկնում հողի առավել բարձր բերրիությամբ.**

1) տայգան
2) տունդրան
3) անապատը
4) տափաստանը

15 **«Բնական զոնա-բնորոշ բուսատեսակ» զույգերից ընտրել ճիշտը.**

1) մերձարևադարձային կոշտատերև անտառ-խցանակաղնի, քարակաղնի
2) խոնավ մերձարևադարձային անտառ-բառբաբ, շշաձառ
3) փշատերև անտառ- հաճարենի, դափնի
4) սավաննա-շագանակենի, բոխի

16 **Ո՞ր պնդումն է *սխալ*.**

1) Եվրասիա մայրցամաքն ամբողջությամբ Լավրասիա հնագույն մայրցամաքի մասն է:
2) Նոր դարաշրջանի վերջում կլիման զգալիորեն ցրտել է, և երկրագնդի հյուսիսային շրջանները սառցապատվել են:
3) Միջին դարաշրջանում երկրագնդի կլիման շոգ ու խոնավ էր, որի շնորհիվ աճում էին փարթամ անտառներ:
4) Գոնդվանա հնագույն մայրցամաքը մասնատվել է հին՝ պալեոզոյան դարաշրջանի վերջերին:

17 **Ո՞ր պնդումն է *սխալ*.**

1) Աշխարհագրական թաղանթում տեղի ունեցող երևույթներն ու գործընթացները չեն կրկնվում:
2) Աշխարհագրական թաղանթի շատ երևույթներ ունեն գոտիական և զոնայական տարածում:
3) Աշխարհագրական թաղանթի շատ երևույթներ միասնական են և փոխպայմանավորված:
4) Աշխարհագրական թաղանթում տեղի է ունենում նյութերի և էներգիայի շրջապտույտ:

18 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Պետության տարածքի ձևը չի ազդում տրանսպորտային ցանցի գծագրության, տարաբնակեցման բնույթի վրա։
2) Տարածքի մեծությունը քաղաքաաշխարհագրական գործոն չէ։
3) Գաղութային անցյալը չի ազդել Աֆրիկայի երկրների սահմանների գծագրության ձևավորման վրա։
4) Պետական սահմանի անցկացումը կատարվում է 2 փուլով՝ սահմանարկման և սահմանագծման։

19 **«Սահմանակից երկրներ-լեռներ» զուգորդումներից ընտրել *սխալը*.**

1) Ռուսաստան-Վրաստան-Մեծ Կովկաս
2) Ֆրանսիա-Իսպանիա-Պիրենեյներ
3) Չինաստան-Հնդկաստան-Ալպեր
4) Արգենտինա-Չիլի-Անդեր

20 **Խաղաղօվկիանոսյան երկրներ են.**

1) Նորվեգիան և Լյուքսեմբուրգը
2) Վրաստանը և Թուրքմենստանը
3) Ճապոնիան և Ֆիլիպինները
4) Հունաստանը և Բուլղարիան

21 **Էքսկլավ է.**

1) Լեսոտոն
2) Ալյասկան
3) Սվազիլենդը
4) Սան Մարինոն

22 **Ո՞ր պնդումն է *սխալ*.**

1) Երբ ծնելիությունը հավասար է մահացությանը, վերարտադրությունը կոչվում է պարզ։
2) Զարգացող երկրներին բնորոշ է նեղ հիմքով, համեմատաբար լայն գագաթով սեռատարիքային բուրգ։
3) Զարգացած երկրներում՝ բնակչության սեռային կազմում, կանանց թիվը գերազանցում է տղամարդկանց թվին։
4) Եվրոպական երկրներում ձևավորվել է բնակչության վերարտադրության առաջին տիպը։

23 **Նոսր բնակեցված երկրներ են.**

1) Ավստրալիան և Կանադան
2) Գերմանիան և Ֆրանսիան
3) Ինդոնեզիան և Ճապոնիան
4) Հայաստանը և Վրաստանը

24 **Այն երևույթը, երբ ամրապնդվում է ազգի լեզվական և մշակութային ընդհանրությունը, և ազգը դառնում է ավելի միասնական և ամրակուռ, կոչվում է.**

1) ագլոմերացիա
2) կոնսոլիդացիա
3) ուրբանիզացիա
4) ասիմիլյացիա

25 **Համաշխարհային էլեկտրաէներգիայի արտադրության կառուցվածքում ամենամեծ բաժինն ունեն.**

1) ջէկերը
2) ջրէկերը
3) ատէկերը
4) մէկերը

26 **Մեքենաշինության տեղաբաշխման սկզբունք չէ.**

1) տեղաբաշխումը վառելիքային բազաների մոտ
2) տեղաբաշխումը սպառման վայրերի մոտ
3) տեղաբաշխումը խիտ բնակեցված վայրերում
4) տեղաբաշխումը գիտական կենտրոնների մոտ

27 **Որոշել եգիպտացորենի ցանքատարածությունների մակերեսը, եթե եգիպտացորենի համախառն բերքը 12000 տ է, իսկ միջին բերքատվությունը՝ 30ց/հա.**

1) 60 կմ^2
2) 40 կմ^2
3) 36 կմ^2
4) 42 կմ^2

28 **Բնութագրումով որոշել լիճը.**

Ամուդարյա և Սիրդարյա գետերը թափվում են մնացորդային ծագման այդ լճի մեջ: Այդ գետերի ջրերը ոռոգման նպատակով օգտագործելու պատճառով լիճը ծանծաղել է: Ո՞ր լիճն է:

1) Բալխաշ
2) Կասպից
3) Բայկալ
4) Արալյան

29 **Ո՞ր պնդումն է ճիշտ**

1) Եվրասիայի ամենացածր կետը Մերձկասպյան ցածրավայրում է։
2) Եվրասիայի տարածքի մեծ մասը պատկանում է Եվրոպային, իսկ փոքր մասը՝ Ասիային։
3) Եվրասիայի ամենամեծ հարթավայրը Մեծ Չինականն է։
4) Եվրասիայի արևելյան և հարավարևելյան շրջաններում շատ են գործող հրաբուխները։

30 **Աֆրիկայի մերձհասարակածային գոտիներում ամառային սեզոնին տեղումների քանակը կազմում է.**

1) 500-600 մմ
2) 1500-1600 մմ
3) 250-300 մմ
4) 1800-2000 մմ

31 **Ո՞ր շարքում *սխալ* կա։**

1) Ասսալի, Քաթթարայի
2) Տանգանիկա, Նյասա
3) Դրակոնյան, Կապի
4) Բենգալյան, Կարմիր

32 **Ո՞ր պնդումն է *սխալ*.**

1) Բերինգի նեղուցով Հյուսիսային Ամերիկան բաժանվում է Եվրասիայից։
2) Բերինգի նեղուցով Չուկոտյան թերակղզին բաժանվում է Լաբրադոր թերակղզուց։
3) Բերինգի նեղուցով են միանում Չուկուտյան և Բերինգի ծովերը։
4) Բերինգի նեղուցով են միանում Խաղաղ և Հյուսիսային սառուցյալ օվկիանոսները

33 **Ո՞ր պնդումն է *սխալ*.**

1) Ալյասկա թերակղզին բարեխառն գոտում է։
2) Յուկատան թերակղզին մերձհասարակածային գոտում է։
3) Ֆլորիդա թերակղզին արևադարձային գոտում է։
4) Նյուֆաունդլենդ կղզին բարեխառն գոտում է։

34 **Ավստրալիայում ի՞նչ լեռներ կան։**

1) Ավստրալական Անդեր
2) Ավստրալական Կարպատներ
3) Ավստրալական Ալպեր
4) Ավստրալական Հիմալայներ

քարտեզ 1



35 **Քարտեզ 1-ի վրա ո՞ր տառով է նշված Լա Պլատայի դաշտավայրը։**

1) Զ
2) Է
3) Ա
4) Բ

36 **Քարտեզ 1-ի վրա ո՞ր տառով է նշված Օրինոկո գետը։**

1) Դ
2) Ե
3) Գ
4) Ը

37 **Ռուսաստանի Դաշնության վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Նավթի պաշարներով ու արդյունահանմամբ աշխարհում գրավում է առաջին տեղը։
2) Էլեկտրաէներգիայի մեծ մասն արտադրվում է ջրային էլեկտրակայաններում։
3) Ածխի արդյունահանման խոշոր ավազաններից է Կուզբասը։
4) Ոսկու պաշարների հիմնական մասը տեղաբաշխված է երկրի եվրոպական մասում։

38 **Մեծ Բրիտանիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Աշխարհի առավել անտառապատ երկրներից է։
2) Կլիման բարեխառն ցամաքային է։
3) Մայրցամաքից բաժանված է Ջիբրալթարի նեղուցով։
4) Հյուսիսային ծովի ծանծաղուտից արդյունահանում է նավթ ու բնական գազ։

39 **Իտալիային պատկանող կղզի է.**

1) Կրետեն
2) Սիցիլիան
3) Կորսիկան
4) Մալթան

40 **Տրված զույգ քաղաքներից Ֆրանսիայում են.**

1) Լյուքսեմբուրգը և Մյունխենը
2) Լիոնը և Մարսելը
3) Թուրինը և Բիրմինգհեմը
4) Դյուսելդորֆը և Լիլը

41 **Դեպի Միջերկրական ծով ելք *չունեցող* պետություն է.**

1) Իսրայելը
2) Իրաքը
3) Լիբանանը
4) Սիրիան

42 **Հնդկաստանի վերաբերյալ ո՞ր պնդումն է *սխալ:***

1) Հինդուստան թերակղզու կենտրոնական մասում է տարածվում Դեկանի սարահարթը:
2) Ընդերքը հարուստ է երկաթի և քարածխի պաշարներով:
3) Գյուղատնտեսության առաջատար ճյուղն անասնաբուծությունն է:
4) Ծանր արդյունաբերության առաջատար ճյուղերից է սև մետաղաձուլությունը:

43 **Աֆրիկայի վերաբերյալ ո՞ր պնդումն է *սխալ*.**

1) Գյուղատնտեսությունը բազմատնտեսաձև է:
2) Համեմատաբար լավ է զարգացած հանքարդյունաբերությունը:
3) Հյուսիսում արդյունաբերական խոշորագույն շրջանը պղնձի գոտին է:
4) Տրանսպորտի զարգացման մակարդակով աշխարհում գրավում է վերջին տեղը:



քարտեզ 2

44 **Քարտեզ 2–ում Արարատի մարզը ո՞ր տառով է նշված.**

1) Է
2) Գ
3) Դ
4) Ը

45 **Քարտեզ 2–ում Աժդահակ լեռնագագաթը ո՞ր տառով է նշված.**

1) Զ
2) Ա
3) Բ
4) Ե

46 **Ո՞ր շարքի միջլեռնային գոգավորություններն են տրված ըստ բարձրությունների աճման.**

1) Մշո, Մանազկերտի, Ալաշկերտի
2) Երզնկայի, Կարնո, Նախիջևանի
3) Մշո, Բալահովտի, Խարբերդի
4) Դերջանի, Երզնկայի, Կամախի

47 **ՀՀ –ի վերաբերյալ ո՞ր պնդումն է *սխալ*.**

1) Բարձրալեռնային գյուղերից դեպի քաղաքներ և ցածրադիր բնակավայրեր կատարվող բնակչության արտահոսքի արդյունքում բազմաթիվ գյուղեր վերացել են։
2) Գյուղական բնակավայրերի միջին մարդաշատությունը վերջին տարիներին նվազել է։
3) Սարահարթերի ցածրադիր մասերում և միջլեռնային գոգավորություններում գյուղերն ունեն հոծ դասավորություն և առաջացնում են համատարած գյուղական տարաբնակեցում։
4) Լեռնային շրջաններում գյուղերը երբեմն դասավորված են գետահովիտների հատակային մասերով անցնող երկաթուղիների կամ ավտոխճուղիների երկայնքով։

48 **Ոչ գյուղատնտեսական հումքի վրա հիմնված ՀՀ սննդի արդյունաբերության ճյուղ է.**

1) պահածոների արտադրությունը
2) գինեգործությունը
3) հանքային ջրերի արտադրությունը
4) պանրագործությունը

49 **ՀՀ ո՞ր մարզի տարածքի զգալի մասն է ընկած Փամբակ և Զորագետ գետերի ավազաններում.**

1) Շիրակի
2) Կոտայքի
3) Լոռու
4) Տավուշ

50 **ԼՂՀ (Արցախի Հանրապետություն) անտառային գոտուն բնորոշ կենդանատեսակներ են.**

1) կրիան և ոզնին
2) գորշ արջն ու լուսանը
3) օձն ու մողեսը
4) բեզոարյան այծը և գայլը

51 **Տրվածներից ո՞րն է նպաստում մթնոլորտի մաքրության պահպանմանը.**

1) անտառների հատումը
2) ցեմենտի արտադրության ավելացումը
3) կանաչապատ տարածքների ավելացումը
4) ասֆալտապատ տարածքների ընդարձակումը

52 **«Բնական ռեսուրս – վերականգնման հատկություն» զույգերից ընտրել ճիշտը.**

1) կենսաբանական ռեսուրս - անսպառ
2) կլիմայական ռեսուրս – սպառվող-վերականգնվող
3) երկրաջերմային ռեսուրս – անսպառ
4) նավթային ռեսուրս – սպառվող - վերականգնվող

53 **Ջրավազաններն աղտոտող արհեստական նյութերից են.**

1) ապարների քիմիական հողմահարման հետևանքով առաջացած նյութերը
2) հարթավայրային գետերով տեղափոխվող փայտանյութերը
3) գեյզերների ջրերում լուծված նյութերը
4) քիմիական պարարտանյութերը

54 **Հողերի էրոզիայի առաջացման պատճառներից է.**

1) խոտհարքների օգտագործումը
2) վարելահողերի մշակումը
3) արոտավայրերի գերարածեցումը
4) տնկարկների ոռոգումը

55 **Ո՞ր պնդումն է ճիշտ**

1) Գլոբալացումը երկրների և ժողովուրդների ազատ ինքնորոշման և սեփական ինքնության հաստատման երևույթն է:
2) Տարածքային հակամարտություններն, ըստ իրենց բնույթի, լինում են միջպետական և ներպետական:
3) Տարածքային վեճերը երբեք խաղաղ ճանապարհով չեն լուծվում:
4) Եվրոպայում այլևս վիճելի տարածքներ գոյություն չունեն:

56 **Գրել Մեծ Անտիլյան կղզեխմբին պատկանող կղզիների համարները:**

1) Կուբա
2) Սարդինիա
3) Գրենլանդիա
4) Հաիթի
5) Վանկուվեր
6) Ճամայկա
7) Վիկտորիա
8) Պուերտո-Ռիկո

57 **Գրել այն մայրաքաղաքների համարները, որոնք իրենց երկրի ամենախոշոր քաղաքը *չեն*.**

1) Բեյջին
2) Մինսկ
3) Թեհրան
4) Կիև
5) Անկարա
6) Բոգոտա
7) Կահիրե
8) Բեյրութ

58 **Գրել այն երկրների համարները, որոնք տարածքով գերխոշոր են.**

1) Կանադա
2) Ճապոնիա
3) Բրազիլիա
4) Գերմանիա
5) Ուկրաինա
6) Նիգերիա
7) Պակիստան
8) Թուրքիա

59 **Գրել այն երկրների համարները, որոնք հանրապետություններ են.**

1) Ֆինլանդիա
2) Ճապոնիա
3) Շվեդիա
4) Լատվիա
5) Դանիա
6) Մեծ Բրիտանիա
7) Եգիպտոս
8) Իսպանիա

60 **Գրել այն երկրների համարները, որոնց բնորոշ է «ժողովրդագրական ճգնաժամը».**

1) ԱՄՆ
2) Կանադա
3) Ուկրաինա
4) Թուրքիա
5) Իրան
6) Լատվիա
7) Սիրիա
8) Եմեն

61 Գրել բազմամետաղային հանքավայրերի համարները.

1) Աբովյանի
2) Թեժ լեռան
3) Շահումյանի
4) Սոթքի
5) Ախթալայի
6) Սվարանցի
7) Մեղրաձորի
8) Հրազդանի

62 Տրված են Հայկական լեռնաշխարհի երեք խոշոր լճերը: Դասավորել դրանց համարները լճերի մակերեսների աճման կարգով:

1) Սևանա 2) Ուրմիա 3) Վանա

63 ՀՀ տրված բնակավայրերի համարները դասավորել ըստ արևոտ օրերի թվի աճման կարգով.

1) Գյումրի 2) Մարտունի 3) Իջևան

(64-65) Քաղաքի բնակչության թիվը 40 000 է, բնակչության բացարձակ մեխանիկական աճը՝ 800 մարդ: Ծնվածների թիվը 3000 մարդ է, մահացածների թիվը՝ 1500 մարդ:

64 Որոշել բնակչության բացարձակ բնական աճը:

65 Որոշել քաղաքի բնակչության թիվը մեկ տարի հետո:

66 Օդի բացարձակ խոնավությունը 10գ/մ³ է, հարաբերական խոնավությունը՝ 40%: Որոշել հագեցման համար անհրաժեշտ ջրային գոլորշիների քանակը:

67 **Վայրի աշխարհագրական կոորդինատներն են՝ հվ. լ. 38°, արլ. ե. 147°: Որոշել տվյալ վայրի ժամային գոտին:**

68 **Որքա՞ն մակերես կզբաղեցնի Չինաստանը (9,6 մլն կմ²) 1 : 40 000 000 մասշտաբի քարտեզում:**

69 **Հյուսիսային Ամերիկայի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.**

1) Հյուսիսամերիկյան պլատֆորմի բյուրեղացած հիմքի մերկացած տեղամասերում առաջացել է Կոորդիլիերների լեռնային համակարգը:
2) Կլիմայի ձևավորման ամենամեծ ազդեցություն ունի Խաղաղ օվկիանոսը:
3) Ատլանտյան օվկիանոսի Լաբրադորյան և Խաղաղ օվկիանոսի Կալիֆոռնիական սառը ծովային հոսանքներն առափնյա շրջաններում առաջացնում են կլիմայի չորություն և օդի ջերմաստիճանի նվազում:
4) Հյուսիսային մասի մակերևույթի ձևավորման վրա մեծ ազդեցություն են թողել սառցադաշտերը:
5) Լաբրադոր թերակղզում տունդրայի զոնայի հարավային սահմանը Ալյասկայի համեմատ ձգվում է բավականին հյուսիս:
6) Ամենաքիչ տեղումները դիտվում են Մեծ Ավազան սարահարթի գոգավորություններում:

70 **ՀՀ Տավուշի մարզի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.**

1) Հարավից դեպի հյուսիս շարժվելիս մակերևույթը աստիճանաբար բարձրանում է:
2) Գետերը պատկանում են առավելապես Արաքսի ավազանին:
3) ՀՀ միակ մարզն է, որը սահմանակից է թե՛ Վրաստանին, թե՛ Ադրբեջանին:
4) Հովտային շրջաններում լայն տարածում ունեն սողանքները:
5) Կլիման առավելապես չորային և խիտ ցամաքային է:
6) Թեթև արդյունաբերության առաջատար ենթաճյուղը գորգագործությունն է: